խաչ բռնած ձեռքին (Պատկ. 33)։ Ապա Թալինից դէպի հիւսիս-արեւելք մի քանի մղոն միայն հեռի Ագիեամանն է, իւր Հոլիսիմէի տիպի, բայց բաւական մեղ աւելի հին, քան 618 թուականը, եկեղեցիով. այս վայրը արժանի է յատուկ ուսումնասիրութեան, այստեղ կան

դիւղից դէպի հարաւ, ձորի մէջ գտնւում են աւերակների մնացորդներ, ուր եղել է բազիլիկ մի եկեղեցի եւ կողքին գերեզմանական մի հետաքրքրական կոթող. նկարի մէջ երեւում է Քասախի կամ Տիկորի տիպի մի խոյակ։

Պատկ. 32

քարերի վերայ նախնական գրութիւններ, կենդանական եւ գծական նշաններով, որոնց նմանները կան Արագածի եւ ուրիշ վայրերում, ինչպէս եւ Մեծամօրի կամ Ներկայ անունով Սեւ Ջրի ակունքների ժայռերի վերայ, ոչ հեռու Զէյլա դիւղից։ Ագիեաման

Թալինից եւ Ագիամանից ոչ հեռու, Մասատրա հին աւանում գտնւում են երկու կոթողներ, թէեւ բազիլիկ եկեղեցու հետքեր մեղ յայտնի չեն այնտեղ, բայց մինչեւ այժմ կանգուն մնացած է. դարի տաճարից առաջ, անպայման պէտք է մի բազիլիկ ե-